—Արի՛, ըսեց, Դաւիթ, հով մի շինեմ՝ դու քնի, ես ըմէն օր չուր իրկուն քու տաւար կ'պահիմ։

Հով մի շինեց ու Դաւիթ մտաւ մէջ, քնաւ։

Պահեց չուր յիրկուն. իրկուն տաւար ջոկեց տուեց Դաւ-թին, բերեց քաղաք։

Քեռի-Թորոսիկն էկաւ թէ՝—Դաւիթ, ո՛րտի, յըմէն, օր իդա վախտի բի։

—Թ'աղէկ կ'էղնի. ըմէն օր իդա վախտ կ'բերիմ։

Ու Դաւիթ գնաց տէրտերոջ տուն ու էլի սաղմոց սկսեց։

Մնաց չուրի լուսուն. լուսուն էլի նախիր տուեց առէջ, քը-շեց ի սար։

Ուր ախպէր լէ էն դէն բերեց ու խառնեց իրար։

Նախրչին ըսեց.—Ախ՛պէր, ըսօր մեր գեղ պատարագ է, գնա մեր գեղ Հրիսայ կի, առ ընձի Հրիսայ. արի։

Դաւիթ էլաւ գնաց գեղ. էն վախտ գնաց, օր ժամուց դուս էն էլած ու էկած էն նստած։

Տէրտներ ու տիրացուք հլա չէն էկած։

Ըսեց.—Հրիսայ լցէք ես ուտիմ, առնիմ իմ ախպօրն ու էր-թամ։

Մարդու մէկն ըսեց.—Սաբր ըրէ, չուրի տէրտներ ու տի-րացուէք իգան, նստին, հաց քաշին ու հաց օրհնին, դու լէ ուտիս ու քու քառսուն պապ լէ, չ'խլըսի։

Էդ էլ ինադ էրեց, կոպալ իցկեց պղնձի կանթ ու թալեց շալակ ու. տարաւ սար։

Էկաւ, տեսաւ, օր ախպէր ընկեր ա քիթ ու բերնի վրէն ու կ'իլայ։

Ըսեց.—Ա՛խպէր, յո՞րի կ'իլաս, ըռըկեր իս, օր աղն ու եղ չըմ բերի։ Ըսեց՝ արի՛ հրիսէն կի՛, իրկուն աղն ու եղ վրէն կի՛։

Ըսեց.—Ա՛խպէր, ի՞նչ էնիմ հրիսէն, դու օր իդա տեղէն գա-ցիր մեր գեղ, քառսուն դև էկան, քառսուն կով իմ նախրի մէջէն ջոկեցին ու տարան. տարան, շրջին սարի էն դէն։